

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Միքայել Մելքումյանի, Նաիրա Զոհրաբյանի և Վահե Հովհաննիսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-061-30.08.2012-ՏՀ-010/0) վերաբերյալ:

Նախագծով առաջարկվում է՝

1) «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 2-րդ հավելվածներով նախատեսված գործունեության տեսակներով զբաղվող ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերին արտոնագրային վճարները նաև ամսական պարբերականությամբ կատարելու (արտոնագրեր ստանալու) հնարավորություն ընձեռել.

2) անհատ ձեռնարկատեր չհամարվող ֆիզիկական անձանց նույնպես արտոնագրային վճարների համակարգում թեթև մարդատար մեքենայով ուղևորավորխաղրման գործունեություն իրականացնելու հնարավորություն ընձեռել:

Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ՝

1) գործունեության հավասար պայմաններ ապահովելու տեսանկյունից արտոնագրային վճարի օբյեկտ համարվող գործունեության տեսակներով զբաղվող բոլոր սուբյեկտների (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր չհամարվող ֆիզիկական անձանց) մասով արտոնագրային վճարներ կատարելու (արտոնագրեր ստանալու) միասնական պարբերականության սահմանման առաջարկությունը համարում ենք ընդունելի, սակայն, հարցի կարգավորման նպատակով նախագծով ներկայացված լուծումներն ամբողջական չեն: Մասնավորապես, նախագծով ներկայացված առաջարկության ընդունման դեպքում «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 2-րդ հավելվածներով նախատեսված գործունեության տեսակներով զբաղվող անձինք հնարավորություն կստանան արտոնագրային վճար վճարող համարվելու միայն որևէ ամսվա, եռամսյակի, կիսամյակի, ինն ամսվա կամ տարվա համար, ինչը նշանակում է, որ անձն արտոնագրային վճար վճարող համարվելու մասին մեկ դիմում-հայտարարությամբ չի կարող արտոնագրային վճար վճարող համարվել, օրինակ, երկու ամսվա համար: Փոխարենը, նման հնարավորություն նախատեսված է «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հավելվածով սահմանված գործունեության տեսակներով զբաղվող տնտեսավարող սուբյեկտների մասով:

Բացի դրանից՝ նախագծի շրջանակներում անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ նախատեսել նաև «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում, ինչպես նաև կարգավորել

ամսվա համար արտոնագիր ստանալու համար դիմում-հայտարարությունների ներկայացման ժամկետների հետ կապված հարցերը.

2) նախագծով առաջարկվող մոտեցումը, որի համաձայն թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրման գործունեությունը կարող է իրականացվել նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից, չի համապատասխանում տրանսպորտային գործունեության ոլորտը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին: Մասնավորապես, «Տրանսպորտի մասին», «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» և «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում կարող են իրականացնել միայն պետական գրանցում ստացած և համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը:

Նախագծում հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության գործող օրենքի համաձայն, անհատ ձեռնարկատերերը, բավարարելով նույն օրենքով սահմանված պահանջները, կարող են համարվել արտոնագրային վճար վճարող նաև օրենքի 1-ին հավելվածով իրականացվող գործունեության տեսակների մասով: Հետևաբար, նախագծի ընդունման դեպքում կստացվի, որ թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում իրականացնող անհատ ձեռնարկատերերը կկարողանան արտոնագրային վճար վճարող համարվել «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ինչպես 1-ին, այնպես էլ 2-րդ հավելվածներին համապատասխան: Նման մոտեցումն անհատ ձեռնարկատերերի շրջանում շփոթություններ կառաջացնի, քանի որ նախագծով այդուհանդերձ չի հստակեցվում այն հարցը, թե անհատ ձեռնարկատերերը թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրման գործունեությունն օրենքի որ հավելվածին համապատասխան պետք է իրականացնեն:

Ֆիզիկական անձանց առանց պետական գրանցման թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում իրականացնելու հնարավորություն ընձեռելուն զուգահեռ նախագծով նախատեսված չեն համապատասխան հսկողական մեխանիզմներ, որոնք հնարավոր կդարձնեն այդ ոլորտի վերահսկողությունը: Այս դեպքում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից իրականացվող գործունեության այդ տեսակը կդառնա գրեթե անվերահսկելի:

Նախագծի ընդունմամբ պայմաններ կստեղծվեն, որպեսզի Հայաստանի Հանրապետությունում թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրման գործունեությունն իրականացվի միայն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ՝

ա. ֆիզիկական անձանց կողմից թեթև մարտադար մեքենայով ուղևորափոխադրման գործունեության իրականացման համար նախագծով առաջարկվող արտոնագրային վճարի դրույքաչափերն էականորեն ցածր են կազմակերպությունների կողմից գործունեության նույն տեսակով զբաղվելու համար «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության գործող օրենքով սահմանված դրույքաչափերից,

բ. գործող օրենսդրությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ վերահսկողության համարժեք գործիքներ և մեխանիզմներ սահմանված չեն:

3) նախագծի 7-րդ հոդվածով առաջարկվող փոփոխությունների անհրաժեշտությունը չկա՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված հոդվածով առաջարկվող փոփոխություններն արդեն իսկ կատարվել են 2012 թվականի հունիսի 22-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-166-Ն օրենքով.

4) օրենսդրական տեխնիկայի կանոնները պահպանելու նպատակով անհրաժեշտ է՝
 ա. 1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերում «կետերի» և «կետում» բառերը փոխարինել համապատասխանաբար «մասերի» և «մասում» բառերով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջները (նույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի 2-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերին),

բ. 2-րդ հոդվածի 1-ին մասում «բառերը» և «բառերով» բառերը նշել եզակի թվով,

գ. 3-րդ հոդվածից հանել «և լրացնել նոր 14-րդ կետով՝ նոր բովանդակությամբ» բառերը,

դ. 3-րդ հոդվածը «խմբագրությամբ» բառից հետո լրացնել «համաձայն հավելված 1-ի» բառերով, իսկ հավելված 1-ի վերևի աջ անկյունում նշել «Հավելված 1» բառը՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի պահանջները, որոնց համաձայն, իրավական ակտով հաստատվող առանձին բաղկացուցիչ մասերը ձևակերպվում են հավելվածների ձևով, իսկ իրավական ակտի համապատասխան մասերը պետք է հղում պարունակեն այդ հավելվածներին (նույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի 4-րդ հոդվածին)

Միաժամանակ հայտնում ենք, որ առաջիկայում կատարվելիք օրենսդրական փոփոխությունների շրջանակներում ևս նախատեսվում է արտոնագրային վճարների օբյեկտ համարվող գործունեության բոլոր տեսակների և կազմակերպաիրավական բոլոր տեսակներով (անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ, անհատ ձեռնարկատեր, կազմակերպություն) գործող տնտեսավարող սուբյեկտների համար միասնականացնել արտոնագրային վճարների հաշվարկման սկզբունքները և վճարման պարբերականությունները:

Ելնելով շարադրվածից՝ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված տեսքով օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Վաչե Գաբրիելյանը:

Տեղեկացնում ենք, որ օրենքի նախագծի ընդունման դեպքում այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

Կից ներկայացվում է օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և
փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման
դեպքում**

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և
փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը
առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն

**«Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ
կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում
կարգավորման ազդեցության գնահատման**

«Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ
կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական
պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է
«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի
հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության
գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին
ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք
ազդեցություն**,

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից՝ **չեզոք ազդեցություն**:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է **դրական** ազդեցություն, քանի որ *հարկ վճարողներին, այդ թվում՝ նաև որոշակի գումարի սահմաններում փարեկան շրջանառություն ունեցող թեթև մարդապար մեքենաներով ուղևորափոխադրում իրականացնող ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերին, հնարավորություն է ընձեռվում արտոնագրային վճարները կատարել նաև ամսական պարբերականությամբ:*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) փոփոխվում է արտոնագրային վճարի վճարման պարբերականությունը:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ
և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի
վերաբերյալ**

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի
բնապահպանության բնագավառում կարգավորման**

1. «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) նախագծի ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում և այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

Եզրակացություն

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծով առաջարկվում է՝

- 1) «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 2-րդ հավելվածներով նախատեսված գործունեության տեսակներով զբաղվող ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերին արտոնագրային վճարները նաև ամսական պարբերականությամբ կատարելու (արտոնագրեր ստանալու) հնարավորություն ընձեռել,
- 2) անհատ ձեռնարկատեր չհամարվող ֆիզիկական անձանց նույնպես արտոնագրային վճարների համակարգում թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրման գործունեություն իրականացնելու հնարավորություն ընձեռել:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն, որ նախագծով ներկայացված վերոհիշյալ առաջարկությունները արտոնագրային վճարների՝ ներկայումս սահմանված դրույքաչափերի փոփոխություն, ըստ էության, չեն ենթադրում՝ գտնում ենք, որ նախագծի ընդունման ազդեցությունը պետական բյուջեի եկամուտների վրա կլինի չեզոք:

Միաժամանակ, նախագծի ընդունումը չեզոք ազդեցություն կունենա նաև պետական բյուջեի ծախսերի վրա:

Պ-061-30.08.2012-S<-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-209-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածում՝

- 1. 6-րդ, 7-րդ կետերի «եռամսյակ» բառից առաջ լրացնել «ամիս» բառը,
- 2. 7-րդ կետում «եռամսյակային» բառից առաջ լրացնել «ամսական» բառը,

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածում՝

- 1. 2-րդ եւ 3-րդ կետերում «եռամսյակային» բառերը փոխարինել «ամսական» բառերով,
- 2. 3-րդ կետում «եռամսյակների» բառը փոխարինել «ամիսների» բառով
- 3. 3.1 կետի առաջին պարբերության «եռամսյակի» բառը փոխարինել «ամսվա» բառով, իսկ «եռամսյակ» բառից առաջ լրացնել «ամիս» բառը,
- 4. 3.1 կետի երկրորդ պարբերությունից հանել «Դիմում-հայտարարություն ներկայացնելու ամսաթիվը ներառող առաջին ոչ ամբողջական եռամսյակի համար արտոնագրային վճարի չափը հաշվարկվում է արտոնագրային վճարի եռամսյակային չափի մեկ երրորդի եւ դիմում-հայտարարությունը ներկայացնելու ամսաթիվը ներառող ամսվանից մինչեւ տվյալ եռամսյակի ավարտը ներառող ամբողջական ամիսների թվի արտադրյալով:» նախադասությունը:

Հոդված 3. [Հավելված 1-ը](#) շարադրել հետեւյալ խմբագրությամբ եւ լրացնել նոր 14-րդ կետով՝ նոր բովանդակությամբ.

Հոդված 4. [Հավելված 2-ը](#) շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

Հոդված 5. Օրենքի Հավելված 3-ի ցանկը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 14-րդ կետով.

«

14.Թեթեւ մարդատար մեքենայով ուղեւորափոխադրում				
--	--	--	--	--

»:

Հոդված 6. Օրենքի Հավելված 5-ի ցանկը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 14-րդ կետով.

«

14.Թեթև մարդատար մեքենայով ուղեւորափոխադրում				
---	--	--	--	--

»:

Հոդված 7. Օրենքի N8 Հավելվածում կատարել հետեւյալ լրացումները եւ փոփոխությունները.

1. 8-րդ կետում «եռամսյա» բառից առաջ լրացնել «ամսական» բառը,
2. 10-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«10. Գործունեության յուրաքանչյուր տեսակի մասով արտոնագրային վճարի չափը որոշվում է ամիսների թվի, մեկ միավորի արտոնագրային վճարի մեկամսյա դրույքաչափի եւ ելակետային տվյալի մեծության, իսկ սույն հավելվածով գործակից սահմանված լինելու դեպքում՝ նաեւ գործակցի արտադրյալով:»

Հոդված 8. Օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող ամսվա 1-ից եւ տարածվում է պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երկրորդ ամսվա 1-ից հետո ծագող հարաբերությունների վրա:

Ց Ա Ն Կ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՉԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂ ՀԱՍԱՐՎԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԱՄՍԱԿԱՆ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԻ

NN	Գործունեության տեսակները	Ամսական արտոնագրային վճարի չափը՝ ըստ բնակավայրերի (հազ. դրամ)				
		ք. երևան	մարզկենտրոններ	այլ քաղաքներ	սահմանամերձ	այլ վայրեր
1.	Բնակչության պատվերով կատարվող՝	6,7	2,5	2,0	0,3	1,0
1.1	կոշիկի եւ կաշվե գալանտերեայի եւ համանման այլ արտադրատեսակների արտադրություն, կոշիկի եւ կաշվե գալանտերեայի պարագաների արտադրություն, կոշիկի եւ կաշվե արտադրատեսակների նորոգում					
1.2	հագուստի արտադրություն և նորոգում					
1.3	գլխարկների արտադրություն և նորոգում					
1.4	գորգերի և գորգագործական արտադրատեսակների արտադրություն և նորոգում					
1.5	փայտյա իրերի պատրաստում, կահույքի և տան կահավորանքի նորոգում					
1.6	ոչ թանկարժեք զարդերի արտադրություն և նորոգում					
1.7	համակարգչային տեխնիկայի, հեռուստացույցների, լվացքի մեքենաների, օդորակիչների եւ այլ կենցաղային տեխնիկայի նորոգում, ծրագրային սպասարկում					
1.8	ինժեներական և հաշմանդամների սայլակների արտադրություն, անձնական օգտագործման և կենցաղային այլ արտադրատեսակների նորոգում					
1.9	տնտեսական և գեղազարդ խեցեգործական արտադրատեսակների արտադրություն					
1.10	այլ ճենապակե և խեցեգործական արտադրատեսակների արտադրություն					
2.	ժամացույցների, ժամանակաչափ սարքերի նորոգում, երաժշտական գործիքների նորոգում	6,7	2,5	2,0	0,3	1,0
3.	Նեղ մասնագիտական գիտելիքների ձեռք- բերման այլ դասընթացներ	6,7	2,5	2,0	0,3	1,0
4.	Լեզուների ուսուցման դասընթացներ	10,0	4,0	3,0	0,4	1,5
5.	Բարձրագույն և այլ հաստատություններ ընդունվելու համար նախապատրաստական դասընթացներ	15,0	5,0	4,0	0,6	2,0
6.	Պարեր, երգեցողություն դասավանդողների գործունեություն	6,7	2,5	2,0	0,3	1,0
7.	Կատարողական արվեստի բնագավառում	6,7	2,5	2,0	0,3	1,0

	գործունեություն, կատարողական արվեստի բնագավառում օժանդակ գործունեություն					
8.	Ստեղծագործական գործունեություն	6,7	2,5	2,0	0,3	1,0
9.	Խնջույքավարների գործունեություն	15,0	5,0	4,0	0,6	2,0
10.	Կրթական գործունեություն և արտադարձական դաստիարակություն մարմնամարզության և սպորտի բնագավառում	6,7	2,5	2,0	0,3	1,0
11.	Մասնավոր տնային տնտեսություններում ծառայությունների մատուցում (առանց տարբերակման) սեփական սպառման համար	6,7	2,5	2,0	0,3	1,0
12.	Ղարբնոցային գործունեություն	6,7	2,5	2,0	0,3	1,0
13.	Զբոսաշրջային տների միջոցով հյուրանոցային ծառայությունների մատուցում*	15,0	10,0	10,0	5,0	5,0
14.	Թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում**	6.8	6.25	5.8	5.8	5.8

* Զբոսաշրջային տների միջոցով հյուրանոցային ծառայությունների մատուցման մասով արտոնագրային վճարի հաշվարկման համար հիմք է ընդունվում զբոսաշրջային տան սենյակների թվաքանակը:

** Տարբեր բնակավայրերում թեթև մարդատար ավտոմեքենայով ուղևորափոխադրում իրականացնելու դեպքում կիրառվում է տվյալ բնակավայրի համար սահմանված արտոնագրային վճարի առավելագույն դրույքաչափը: Այն դեպքում, երբ բնակության միևնույն հասցեում գրանցված (հաշվառված) անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձիք, նրանց անուսինները, ծնողները, երեխաները, եղբայրները, քույրերը միևնույն թեթև մարդատար մեքենայով իրականացնում են ուղևորափոխադրում, կարող են ստանալ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի անվանք միայն մեկ արտոնագիր: Ընդ որում, այս դեպքում արտոնագրային վճարի ամսեկան դրույքաչափը սահմանվում է սույն հավելվածով սահմանված դրույքաչափին ավելացրած յուրաքանչյուր վարորդի համար 1000 դրամ: Ե:

Ց Ա Ն Կ

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ԿՃԱՐ ԿՃԱՐՈՂ ՀԱՄԱՐԿԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԱՄՍԱԿԱՆ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ԿՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԻ

Գործունեության տեսակը	Արտոնագրային վճարի հաշվարկման համար հիմք ընդունվող մեծությունը	Արտոնագրային վճարի ամսական դրույքաչափը 1 միավորի (հազար դրամ)				
		Երևան քաղաքում	մարզ-կենտրոններում	այլ քաղաքներում և Երևանի քաղաքի վարչական սահմաններից մինչև 20 կմ հեռավորության վրա գտնվող բնակավայրերում	այլ վայրերում	սահմանամերձ բնակավայրերում
Առևտրի իրականացման վայրերից դուրս գտնվող՝ Երևան քաղաքում՝ 7մ², այլ վայրերում՝ 10մ² առևտրական տարածքը չզերազանցող կրպակի միջոցով առևտրական գործունեություն	կրպակի ընդհանուր տարածք, մ ²	1,7	0,8	0,7	0,7	0,3
Թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում*	x	6,8	6,25	5,8	5,8	5,8
Բիլիարդ խաղի կազմակերպում	խաղասեղան	40,0	20,0	20,0	20,0	20,0
Սեղանի թենիս խաղի կազմակերպում	խաղասեղան	13,3	6,7	6,7	6,7	6,7
Վարսավիրական ծառայությունների մատուցում	x	15,0	12,08	12,08	9,0	9,0
Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում և նորոգում	x	15,0	12,08	12,08	12,08	12,08
Համակարգչային խաղերի կազմակերպում	մոնիտոր	20,8	20,0	15,0	10,0	8,33

* Տարբեր բնակավայրերում թեթև մարդատար ավտոմեքենայով ուղևորափոխադրում իրականացնելու դեպքում կիրառվում է տվյալ բնակավայրի համար սահմանված արտոնագրային վճարի առավելագույն դրույքաչափը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը). Նախագծի նպատակը «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրառության ընթացքում առաջ եկած խնդիրների լուծումն է:

2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը եւ առկա խնդիրները. Ներկայումս գործող «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ստեղծվել են անհավասար պայմաններ արտոնագրային վճար վճարողների շրջանում, մասնավորապես՝ թեթև մարդատար մեքենաներով ուղևորափոխադրում իրականացնող ֆիզիկական անձինք եւ անհատ ձեռնարկատերերը, որոնք ունեն մինչեւ 6 մլն դրամ տարեկան շրջանառություն, ինչպես նաեւ գործող օրենքի Հավելված 1-ով եւ Հավելված 2-ով սահմանված գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտները, արտոնագրային վճարը շարունակում են վճարել նվազագույնը եռամսյա ժամանակահատվածի համար եւ հաշվի առնելով այն, որ արտոնագրային վճարը պետք է վճարվի միանվագ՝ նախքան արտոնագրի ստանալը, տնտեսվարող սուբյեկտների հիմնական մասը պատրաստ չէ 3 ամիսներին բաժին ընկնող արտոնագրային վճարը միանվագ ձեռով կատարելուն: Հետեւաբար, գործող օրենքին համապատասխան արտոնագրային վճար վճարող փոքր եւ միջին ձեռնարկատիրության ոլորտի բազմաթիվ սուբյեկտներ հայտնվել են ոչ բարենպաստ մրցակցային իրավիճակում:

Վերոնշյալից բխում է գործող օրենքում համապատասխան փոփոխություն կատարելու անհրաժեշտությունը:

3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով առաջարկվող փոփոխություններն ընդունելով՝ կձեւավորվեն հավասար մրցակցային պայմաններ արտոնագրային վճար վճարող տնտեսվարող սուբյեկտների շրջանում:

4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները եւ անձինք. Նախագիծը մշակվել է ՀՀ ԱՏ պատգամավորներ Միքայել Մելքումյանի, Նաիրա Զոհրաբյանի, Վահե Հովհաննիսյանի կողմից՝ մասնագետ-փորձագետների մասնակցությամբ:

5. Կարգավորման առարկան. Նախագծի կարգավորման առարկան «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հարկման մոտեցումներն են՝ կապված վճարումների կատարման պարբերականության հետ:

6. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը. Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է բարելավել արտոնագրային վճարների համակարգը, ստեղծել հավասար մրցակցային դաշտ: